

Հիմնական անվանումը՝

Ճառագայթման դաշտի ազգային չափանմուշ ԱԶ ՀՀ 1-21

Ստանդարտի անվանումը՝

0.1-ից մինչև 0.4 մ աշխատանքային բացվածքով 2.5-12.0 ԳՀց հաճախականության տիրույթում պլեհավաքային համակարգերի ճառագայթային դաշտի պարամետրերի չափման միջոցների պետական հատուկ չափանմուշ և պետական ստուգաչափման սխեմա:

Նորմատիվ փաստաթղթեր՝

ԳՕՍՏ 8.191-76

Երկրի կոդը՝

AM

Մասնագետ – պահապան՝

Անուն, ազգանուն, հայրանուն՝ Բարխուդարով Էռնեստ Սեմյոնի

Հեռ.՝ 091496438

e-mail. info@armstandard.am

Համարը ռեեստրում՝

ԱԶ ՀՀ 1-21

Պատրաստող՝

ՌԶԳՀԻԶ (Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ)

Չափանմուշի փոփոխման տարին՝

13.04.2021

Հաստատման տարեթիվը՝

ՄԶՍՄ տնօրենի № 44 13.04.2021թ. հրամանը

Չափագիտական սպասարկում՝

EM. 10, EM. 11

Էտալոնի տեսակը՝

Ազգային չափանմուշ

Տեխնիկական վիճակը՝

Աշխատող

Փաստաթղթերի առկայությունը՝

Անձնագիր

Պահպանման և կիրառման կանոնները

Թողարկման տարին՝

1976

Վերջին ինվենտարիզացիայի տարին՝ 2020

Ինստիտուտ-պահապանը.
Կրճատ անվանումը՝ ՄՉԱՄ

Երկիրը՝ Հայաստան

Ինստիտուտ-պահապանի բաժինը՝ Էտալոնների պահպանման գիտական բաժին

Իրավաբանական հասցեն՝ Հայաստան, 0051, Երևան, Կոմիտաս 49/4

Հեռախոսահամարը՝ +374 10 23 26 00

Կիրառման ճյուղը, կոչումը՝

Պետական հատուկ չափանմուշը նախատեսված է 2,5÷12,0 ԳՀց հաճախությունների տիրույթում 0.1 մինչև 0.4 մ բացվածք ունեցող անտենային համակարգերի ճառագայթման դաշտի ուժեղացման գործակցի, լարումների հարաբերության բաշխվածության, չափման հարթությունում ուղղվածության գործողության գործակցի և էֆեկտիվ մակերևույթի միավորների վերարտադրման ու պահպանման և երկրորդային չափանմուշների ու չափման օրինակելի միջոցների օգնությամբ երկրում չափումների միասնականությունն ապահովելու նպատակով ժողովրդական տնտեսության մեջ կիրառվող աշխատանքային միջոցներին այդ միավորների չափի փոխանցման համար:

Նկարագրությունը՝

Չափանմուշի աշխատանքը հիմնվում է 0,25 X 0,25 մ² աշխատանքային բացվածք ունեցող ռուպորային ալեհավաքի գործարկման սկզբունքի վրա:

Չափագիտական բնութագրերը՝

Նումինալ արժեքները, դիապազոնը

Ճառագայթման դաշտի վերարտադրվող պարամետրերի միջակայքերը 2.5 ÷ 4.0 և 8.2÷12,0 ԳՀց հաճախականությունների տիրույթում, ուժեղացման գործակցի համար 40÷600, լարումների հարաբերության բաշխվածության համար, η^F 0 ÷ -30, ուղղվածության գործողության գործակցի համար 30÷150, էֆեկտիվ մակերևույթի համար՝ մ² 0,049÷0,035

Միավորների վերարտադրման պատահական սխալները՝

Ուժեղացման գործակցի համար չի գերազանցում $0,7 \cdot 10^{-2}$, ճառագայթման դաշտի լարումների հարաբերության համար $0,5 \cdot 10^{-2}$, ուղղվածության գործողության գործակցի համար $0,6 \cdot 10^{-2}$, էֆեկտիվ մակերևույթի համար՝ $0,7 \cdot 10^{-2}$

Չբացառված սխտեմատիկ սխալներ՝

Ուժեղացման գործակցի; $1,5 \cdot 10^{-2}$
լարումների հարաբերության բաշխվածություն; $0,5 \cdot 10^{-2}$
ուղղվածության գործողության գործակցի; $1,0 \cdot 10^{-2}$
էֆեկտիվ մակերևույթ: $1,5 \cdot 10^{-2}$

Անորոշություններ՝

Ստանդարտ անորոշություն, A տիպի
Ստանդարտ անորոշություն, B տիպի
Գումարային ստանդարտ անորոշություն
Ընդլայնված անորոշությունը $k = 2$

Լուսանկարները՝



Ռուպորային անտենա բացվածքի 0.25×0.25 մ² չափով (աջից առաջինը) ԳԷՊԻ-0.25

Էտալոնի կազմը՝

Ռուպորային ալեհավաք $0,25 \times 0,25$ մ² աշխատանքային բացվածքի չափերով, ադապտորների հավաքածու, ընդունիչ գլխիկների հավաքածու, կարգավորման և տեղադրման սեղան, առանցքային պտույտի համակարգ, հենման-պտտման ազիմուտային հարմարանք, փորձարկման ստենդ, որը պարունակում է հատուկ ընդունիչների, գեներատորների, ավտոմատ կառավարման, ազդանշանի փոխակերպման, ցուցադրման եւ տեղեկատվության մշակման համակարգեր, թվային համակարգիչներ, օժանդակ ալեհավաքներով չափիչ աշտարակ, №1 փորձադաշտ: